



**ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ**



**Յ. Ա.— ԵԳԻՊՏՈՍ.—** Մազերը ածիլելով, լուալով եւ ալքոլ քսելով, կարելի չէ կանխել կամ բուժել հեբաթափուծիւնը: — Գլխու թեփին մասին Յելադրուծիւններ ըրած ենք Նախորդ թիւերուն մէջ: — Դէմքի մազերը արմատապէս անհետացնելու համար, ընդ չկայ: Ամէնէն լաւ արդիւնքը կուտայ ելեքտրականութեամբ մազերուն մի առ մի փնացումը (*electrolyse*), որ երկար աշխատանք է եւ մասնագէտ ըմբիշի մը կողմէ կարելի է ի գործ դնել: — Հասակին անումը կը դարդրի մօտ 25 տարեկանին, երբեմս 28—30ին: Այդ տարիքէն վերջ հասակը անցնել դժուար է: Աւելի կանուխ, կարգ մը դեղերով (Ներ-ծորային գեղձերով պատրաստուած) ինչպէս նաեւ մասնաւոր մարզանքով երբեմն կարելի է որոշ չափով անցնել հասակը: Ելեքտրական կամ այլ գործիքները, մարզանք ընել տալով միայն կ'ազդեն, եթէ ազդեն...

**Ա. Մ.— (ՏԻԹՒՈՅԹ).—** Արդէն պատասխանած ենք ձեր հարցումին: Ձրոնիկ (հին) շերմամբղումեան բուժումը մասնագէտի ձեռքով միայն կարելի է:

**ՎԱՀՐԱՄ.— ՓԱՐԻՋ.—** Ձեր ընդհանուր կզամը եւ մասնաւորաբար Պոքերը զօրացուցէք հանգիստով, լաւ սնունդով, օդափոխութեամբ, յարմար մարզանքով: Բժշկական պարբերական քննութիւնը անհրաժեշտ է ձեր Պոքերուն վիճակը ստուգելու համար:

**Ա. Խ.— ՎԱԼԱԼԱՍ.—** Փորձեցէք իրիկունները թեթեւ ճաշ ընել: Եթէ Յ ժամ կը քնանաք եւ ուրիշ ո եւ է անհանգստութիւն չունիք, հոգ մը ընէք:

**Կ. Յ.— ԼԻՈՆ.—** Մազերու կանխադաս ճերմկիլը կապ ունի ժառանգականութեան հետ: Դարմանք՝ ներկն է: — Ջանացէք ուրիշ ուղղութիւն տալ ձեր երիտասարդական աւելնիլն, ընթերցանութեամբ, մարզանքով, աշխատանքով, եւայլն: — Լաւագոյնը՝ պահպանակն է:

**Ա. Մ.— ԷԲՍ.—** 1 — կարելի է ժուժկայ ապրիլ, այդ ճիշտ է մեծամասնութեան համար: 2 — Գիշերային հոսումները արդիւնք են սննդական, ֆիզիքական կամ մտային գրգռումի, եթէ յանախ պատահին՝ անշուշտ յոգնութիւն կը պատճառեն: 3 — Նախորդ թիւով մը պատասխանած ենք այդ հարցումին. տարբերութիւնն այն է որ կայ քնական եւ անքնական պայմաններու տակ կատարուած գործողութեանց մէջ: 4 — Երեսի քցտիկները մորթի իւզագեղձերուն մասնաւոր մանրէով մը վարակումէն յառաջ կուգան: Նպաստաւորող պայմաններն են՝ արբուքի շրջանը, դժուարամարտութիւնը, պնդութիւն, ստամոքսի եւ աղիքներու խանգարումները եւայլն: կարգացէք թիւ 29ի հարցաբանը:

... **ՏՈՌՍ.—** Հազուադէպ չէ նոր հարսերուն քով, մանաւանդ երբ քիչ-շատ ջղախն են: Պատճառը՝ կազմուած վէրքն է որ կճկում յառաջ կը բերել եւ ցաւալի կը դարձնէ մերձեցումը: Վէրքը պէտք է դարմանել:

**ՏԻԿ. Ս. Ա.— ԼԻՈՆ.—** Ձեր նկարագրութեանն այնպէս կը հետեւցնենք թէ գործողութեան սպին տեղի տուած է. լաւ կ'ընէք գօտի գործածելով: Եթէ անհանգստութիւն մը չէք զգար, ամէն ինչ կ'ընաք ուտել, ինչպէս նաեւ գինի գործածել:

**ՏԻԿ. . . ԱՄԵՐԻԿԱ.—** Յարուկը ո եւ է օգուտ չունի լայնբրակութեան դէմ: Եթէ շեշտուած չէ, կրնաք մասնաւոր գուլպայ գործածել: Իսկ եթէ խոշոր այտուցներ (արիւնով լեցուն ուռած մասեր) կան, այդ պարագային կրնաք ընել տալ թիւ 31ի մէջ յանձնարարուած դարմանումը եւ յաջող արդիւնք կը ստանաք:

Վ. Ղ.— ՏԻԹՐՈՑԹ.— Արեան գէշ շրջանառութեան հետեանք ըլլալու է. կը կարծենք թէ ներծորային լարզ մը գեղձերով դարմանումը կրնայ օգտակար ըլլալ: Բայց նախապէս այդ ուղղութեամբ հիմնական ըննութիւն մը պէտք է ընել. հետեւաբար կը ցաւինք որ դարման մը չենք կրնար յանձնարարել:

Պ. Ճ.— ՊՈՒՆՍՍ.— Պէտք է ծանօթ ըլլալ ձեր կազմին, ձեր ունեցած Պոքախտի մտին, ընթացքին, դարման մը կարեւալ յանձնարարելու համար, զոր յանախ պէտք կ'ըլլայ փոխել ստացուած արդիւնքին եւ հիւանդութեան ընթացքին համեմատ: Շետեւաբար ձեր բժշկը միայն կրնայ պատշաճ դարմանը ընել: Այսուհանդերձ եթէ ձեր միայն մէկ Պոքը վարակուած է եւ լաւ ըննութիւն մը ցոյց տայ թէ կարելի է Պոքաճնշում ընել (*pneumothorax*), այդ պարագային մի վարանիք ընել տալ, որովհետեւ ներկայիս Պոքախտին դէմ լաւագոյն դարմանումն է, երբ կարելի է այդ մեթոտը կիրարկել: Կան Պոքախտի ձեւեր ուր ոսկիի նորագոյն բաղադրութիւններու ներարկումներ՝ լաւ արդիւնք կուտան. ձեր վիճակին ծանօթ մասնագէտ բժիշկ մը միայն կրնայ ըսել թէ այդ դարմանումը ձեզ օգտակար կրնայ ըլլալ թէ ոչ: Այս ամէնուն հետ պէտք չէ զանց առնել ընդհանուր առողջապահական դարմանումը՝ լաւ սնունդ, մաքուր օդ եւ այլն: 2. — Զանի որ շատ յանախաղկալ չեն՝ մի մտախօզութիւն: Գրգռիչ ուտելիքներէ, ըմպելիքներէ եւ ընթերցանութիւններէ զզուշանալով, կրնաք մասամբ նուազեցնել նրազախարութեան յանախականութիւնը:

ՌՈՏՈՒՆ.— ՊԵՅՐՈՒԹ.— Զեր այդ վիճակին պատճառը՝ դիւրութենէն զատ, շերմաճիւղութենէն մնացած շագանակազեղծատուպի մը (*prostatite*) հետեւանքը կրնայ ըլլալ: Մասնագէտի մը կողմէ լաւ ըննութենէ մը ետք, քանի մը մարծում (*massage de la prostate*) եւ անհրաժեշտ դարմանումը ընել տուէք: Մի մտախօզութիւն, կրնաք ամուսնանալ: Բայց նախ սեղմի մշակում մը ընել տուէք, ստուգելու համար ջերմաճիւղութեան միքրոպին (կոնոքոք) հիմնովին անհետացած ըլլալը:

Ս. Ե. — ԵՐՈՒՍԱՂԷՄ.— 1) Դէմքի եւ մարմնի բշտիկներուն եւ գլխի թեփին մասին կարգացէք նախորդ թիւերուն (մասնաւորաբար թիւ 20ի եւ 32ի) հարցարաններով տրուած պատասխանները: 2) Եաքարեղէնը եւ մրգեղէնը ակուաներուն չեն վնասեր, եթէ ցնշիւր վերջ ակուաները լաւ մաքրութիւն խղանակով եւ օճառով կամ ատամնախիւսերով: Անոնց մնացորդներն են որ խմորելով կը թափանցեն ու ակուաներուն կը վնասեն: 3) Այսը սրտտեսելու համար, պէտք է յարմար ակնոց գործածել, եթէ պէտք կայ: [ 4) «Արեան աղտոտութիւն» ըսելով ի՞նչ կը հասկնաք: Շիւանդութեան միջոցներն ու դարմանը՝ «աղտոտութեան» պատճառէն կախում ունին:

Ս. Ա. ՖԻԼԻՊԷ.— 1— Յլաշիճուկը (*Sérodause antitoxisengyl*) կը ծախուի այրերուն համար: Ուրիշ տուներու կողմէ ալ կը պատրաստուի, տարբեր անուններու տակ: Կրնաք գործածել, բայց լաւ է որ նախապէս ձեր բժիշկին կարծիքը առնէք: 2— Ետրկալիս չկայ դեղ մը որ շագարեխտը հիմնովին եւ տեսականապէս բուժէ: Զեր գործածած զանազան դեղերը՝ մեծապէս օգտակար են, բայց չպէտք է զանց ընել Աժմիճը — պարագային համեմատ խիստ կամ թեթեւ: Այս մասին պատասխանած ենք ձեզի թիւ 24ի հարցարանով: Կը կրկնենք որ ջիջ մը զոհողութիւնով պէտք է հաշտ ապրիք շագարախտին հետ, անոր բարգուծութենէն խուսափելու համար: